

## ՎՐԱՍՏԱՆ

Առողջապահության բնագավառում համագործակցության համաձայնագիր է ստորագրվել 1993թ. մայիսի 19-ին, Երևանում:

Ստորագրող կողմերն են ՀՀ կառավարությունը և Վրաստանի կառավարությունը:

Համագործակցության շրջանակներն են.

- առողջապահության կազմակերպում և էկոնոմիկա,
- հիվանդությունների կանխարգելում,
- տեղեկությունների փոխանակություն արտակարգ իրավիճակների և համաճարակային իրադրության վերաբերյալ,
- մասնագիտացված բուժօգնություն մեծահասակներին և մանուկներին,
- գիտական և բժշկական կադրերի պատրաստում,
- ֆարմացևտիկ և բուժական տեխնիկա,
- ռեկոնստրուկտիվ-պլաստիկ վիրաբուժություն,
- տրասպլանտոլոգիա,
- ներոլոգիա և նեյրովիրաբուժություն,
- ՁԻԱՀ,
- Նարկոլոգիա և տոքսիկոլոգիա,
- Կուրորտոլոգիա, ալերգոլոգիա և իմունոլոգիա,
- Օնկոլոգիա,
- Մանկաբարձություն, գինեկոլոգիա, ռեպրոդուկտոլոգիա,
- Պրոկտոլոգիա,
- Քարանձավաբուժություն,
- Օֆթալմոլոգիա (կոնտակտային ոսպնյակներ),
- Մանկական ուրո-նեֆրոլոգիա,
- Մանկական ռեաբիլիտոլոգիա՝ օրթոպեդիկումով,
- տեղեկությունների, փորձի, մասնագետների փոխանակություններ, մասնակցություն միմյանց գիտական միջոցառումներին, համատեղ գիտական աշխատանք,
- անվճար բուժօգնություն արտակարգ իրավիճակների ժամանակ,
- վճարովի հիմունքներով հիվանդների գործուղումներ ուղեգրերով՝ պլանային բուժօգնության դեպքում,
- համետղ աշխատանք ուսումնական ծրագրերի բարելավման ուղղությամբ, ուսանողների վճարովի հիմունքներով փոխանակում,
- մասնագետների ստաժավորում, կատարելագործում՝ վճարովի հիմունքներով,
- համագործակցություն սանիտար-հակահամաճարակային ծառայությունների միջև,
- շրջակա միջավայրի պաշտպանություն,
- դեղագործություն և դեղարտադրություն, բժշկական արդյունաբերություն: